ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «27» 09.2024թ. N 2433-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 1391-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի մայիսի 27-ի «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2024 թվականի միջոցառումները հաստատելու մասին» N 1391-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը՝

1) 1-ին կետի 2-րդ ենթակետում «2024 թվականին ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսների մասնակցության ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի» բառերը փոխարինել

«2024 թվականին ազգային և նախարարության տաղավարով միջազգային ցուցահանդեսների մասնակցության ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի» բառերով

2) N1 Հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում և 5-րդ կետում «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» բառերը փոխարինել «օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում.» բառերով

3) N1 Հավելվածի 6-րդ կետում «2024 թվականի ընթացքում նախատեսվում է աջակցության տրամադրում միայն օտարերկրյա պետությունում անցկացվող միջազգային ցուցահանդեսների դեպքում՝ ազգային տաղավար ձևաչափով» բառերը փոխարինել «2024 թվականի ընթացքում նախատեսվում է աջակցության տրամադրում օտարերկրյա պետությունում անցկացվող միջազգային ցուցահանդեսների դեպքում՝ ազգային տաղավար ձևաչափով և Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ցուցահանդեսների դեպքում՝ նախարարության տաղավարով:» բառերով.

4) N1 Հավելվածի 7-րդ կետում «Միջազգային ցուցահանդեսներին ազգային տաղավարով մասնակցության կազմակերպումն իրականացվում է հետևյալ սկզբունքով » բառերը փոխարինել «Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպումն և մասնակցության ապահովումն իրականացվում է հետևյալ սկզբունքով » բառերով .

5) N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
2024 թվականի
27.09.____2024թ.-ի N2433-Ա հրամանի

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
2024 թվականի
___27__05___2024թ.__-ի N_1391-Ա հրամանի

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. «Green week» 88-րդ գյուղատնտնտեսության ոլորտի միջազգային առևտրային ցուցահանդես- հունվարի 19-ից 28-ը (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)
2. «Gulfood-2024» 29-րդ սննդի և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդես- փետրվարի 19-ից 23-ը (Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ)

3. 8-րդ Չինաստան-Եվրասիա էքսպո» ներկրման և արտահանման միջազգային ցուցահանդես- հունիս 26-ից 30-ը (Սինցզյան, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն).
4. «Riga food 2024» սննդի, խմիչքի, փաթեթավորման միջազգային ցուցահանդես- սեպտեմբերի 5-ից 7-ը, (Ռիգա, Լատվիայի Հանրապետություն)
5. «Foodex Saudi-2024» սննդի և ոչ ալկոհոլային խմիչքների ցուցահանդես-սեպտեմբերի 16-ից 19-ը (Ռիադ, Սաուդյան Արաբիա)
6. «World food India 2024» միջազգային ցուցահանդես-սեպտեմբերի 19-ից 22-ը (Նյու-Դելի, Հնդկաստանի Հանրապետություն).
7. «ԴիջիԹեք էքսպո 2024» տեխնոլոգիական ցուցահանդես–հոկտեմբերի 4-ից 6-ը (Երևան, Հայաստանի Հանրապետություն)
8. «Sial-2024» սննդի և խմիչքի միջազգային ցուցահանդես- հոկտեմբերի 19-ից 23-ը (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն).
9. Չինաստանի 7-րդ միջազգային ներմուծման ցուցահանդես- նոյեմբերի 5-ից 10-ը (Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն).
10. «Bazaar Berlin» դիզայներական միջազգային ցուցահանդես – նոյեմբերի 6-ից 10-ը (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)»
11. «AgroPack» գյուղատնտեսական միջազգային ցուցահանդես-նոյեմբերի 25-ից 28-ը (Էրբիլ, Իրաքի Հանրապետություն).
12. «Food Africa» սննդի և ըմպելիքների միջազգային ցուցահանդես-դեկտեմբերի 3-ից 5-ը (Կահիրե, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն)
13. «CPHI Middle East» դեղագործական միջազգային ցուցահանդես – դեկտեմբերի 10-ից 12-ը (Էր Ռիադ, Սաուդյան Արաբիա)»